



Կարգապահական գործ թիվ ԿԳ-18142

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի փետրվարի 27-ի թիվ 57-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԿԳ/33-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՅԱՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարգսյանի կազմով, քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Գայանե Զաքարյանին (արտոնագիր՝ թիվ 432) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

15.10.2018թ. Պալատ է դիմել (մուտք՝ 18.10.2018թ. N 3000-18) Գարուն Խաչիկյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**)՝ հայտնելով, որ փաստաբան Գայանե Զաքարյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) շուրջ 4 տարի զբաղվել է Դիմողի երեք գործերով, որոնք վերաբերել են ալիմենտի պահանջի, ամուսնալուծության և համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված գույքի բաժանման հարցերի: Այդ գործերով Դիմողը փաստաբանին առձեռն վճարել է 270.000 ՀՀ դրամ: Բացի այդ, Դիմողը վճարել է նաև Պատասխանողի՝ դատական նիստերի մեկնման և վերադարձի համար:

Դիմողի պնդմամբ, Պատասխանողն իրեն չի տրամադրել փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակը, Դիմողի կողմից վճարված փաստաբանի հոնորարի վճարման անդորրագրերը: Դիմողը բազմաթիվ անգամ դիմել է Պատասխանողին, սակայն վերջինս միայն խոստացել է, որ կտա պայմանագրերի օրինակը և վճարման անդորրագրերը՝ խաբելով Դիմողին: Դիմողը նաև նույնաբովանդակ նամակ է գրել փաստաբանին, սակայն նա այն հետ է վերադարձրել:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի կողմից 19.11.2018թ. թիվ 402-Ա/ԿԳ-18142 որոշմամբ (**այսուհետ նաև՝ Որոշում**)՝ փաստաբան Գայանե Զաքարյանի (արտոնագիր՝ թիվ 432) նկատմամբ հարուցվել է կարգապահական

վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագրքի**) 3.1.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով

21.11.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Պալատի խորհրդի նիստում տրված բացատրությունում Դիմողը նշել է, որ Պատասխանողի հետ փաստաբանական ծառայությունների մատուցման գրավոր պայմանագիր չի կնքել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

16.01.2019թ. Պալատ է մուտքագրվել Պատասխանողի բացատրությունը, որում Պատասխանողը նշել է, որ Դիմողը 4 տարի առաջ դիմել է Պատասխանողին ամուսնալուծության, այլմենտի և համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված գույքի բաժանման հարցերով փաստաբանական ծառայություն մատուցելու խնդրանքով: Դիմողի և Պատասխանողի միջև կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագիր, համաձայն որի՝ Դիմողը Պատասխանողին վճարել է 150.000 ՀՀ դրամ: Կողմերը պայմանավորվել են, որ Դիմողը կհոգա փաստաբանական ծառայության մատուցման հետ կապված՝ Պատասխանողի տրանսպորտային ծախսերը:

Ըստ Պատասխանողի՝ իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու Պալատի նախագահի 402-Ա/ԿԳ-18142 որոշումից ակնհայտ է, որ Դիմողը դիմումում չի հերքել փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու փաստը, պարզապես նշել է, որ պայմանագրի օրինակն իրեն չի տրամադրվել:

Պատասխանողը նաև նշել է, որ նույնիսկ եթե Դիմողն իրեն գրել է նամակ պայմանագրի օրինակն իրեն տրամադրելու խնդրանքով, ապա նամակը կարող էր ետ վերադարձվել «չպահանջված» լինելու պատճառով, քանի որ Պատասխանողը նախկին հասցեում չի բնակվում և չի գործում:

Պատասխանողը հայտնել է, որ ներկայում փաստաբանական գործունեություն է իրականացնում Կոտայքի մարզում և Երևան քաղաքում, իսկ իր նախկին գործերով արխիվային նյութերի մի մասը գտնվում է Բերդ քաղաքում, իսկ նյութերի մեծ մասը Պատասխանողը չի պահպանել՝ դրանք տեղափոխելու ակնհայտ անհարմարությունից ելնելով, նաև վաղեմությունն անցնելու պատճառով, ուստի՝ պարզաբանում է, որ Բերդ մեկնելուն պես կփնտրի Դիմողի հետ կնքած պայմանագրի օրինակը և լրացուցիչ բացատրություն կներկայացնի Պալատ:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը.

Եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Նախապատրաստողը 18.10.2018թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն՝ հաստատված են համարվել հետևյալ փաստերը՝

- Դիմող Գարուն Խաչիկյանի ներկայացուցիչը հանդիսացել է Պատասխանող փաստաբան Գայանե Զաքարյանը:

- Դիմող Գարուն Խաչիկյանի և փաստաբան Գայանե Զաքարյանի միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ 30.01.2019թ. Պալատ է մուտքագրվել Դիմողի առարկությունը, որում հայտնվել է, որ Դիմողը ծանոթացել է Նախապատրաստողի եզրակացությանը և Պատասխանողի 15.01.2019թ. բացատրությանը և պնդում է, որ իր բացատրության մեջ Պատասխանողը ստում է: Թեև Դիմողն իր դիմումում նշել է, որ Պատասխանողի հետ կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, սակայն պնդում է, որ իրականում իրենց միջև որևէ գրավոր պայմանագիր կամ համաձայնագիր չի կնքվել, այլ պարզապես բանավոր կարգով պայմանավորվել են, որ Դիմողը պետք է վճարի Պատասխանողին 270.000 ՀՀ դրամ: Դիմողը պայմանագիրը և համաձայնագիրը չի տեսել և չի ստորագրել: Դիմողն անձամբ՝ վկաների ներկայությամբ Պատասխանողին վճարել է 270.000 ՀՀ դրամ, որի դիմաց Պատասխանողից որևէ կտրոն, անդորրագիր կամ ՀԴՄ կտրոն չի ստացել:

Գործը Խորհրդին է հանձնվել 22.01.2019թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 27.07.2019 թ. ժամը 19:00-ին Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ նաև՝ **Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը՝ հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմող Գարուն Խաչիկյանի ներկայացուցիչը հանդիսացել է Պատասխանող փաստաբան Գայանե Զաքարյանը:

2. Դիմող Գարուն Խաչիկյանի և Պատասխանող փաստաբան Գայանե Զաքարյանի միջև փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր չի կնքվել:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դիմողի կողմից ներկայացված դիմումով, Պատասխանողի բացատրությամբ:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղականքի համաձայն՝ Գայանե Զաքարյանը փաստաբան է հանդիսանում 20.06.2003թ., և 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 2 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

Պալատի խորհրդի 15.04.2015թ. թիվ ԿԳ/61-Ա որոշմամբ Գայանե Զաքարյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, և կարգապահական տույժը մարվել է:

Պալատի խորհրդի 06.10.2015թ. թիվ ԿԳ/137-Ա որոշմամբ Գայանե Զաքարյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, և կարգապահական տույժը մարվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գայանե Զաքարյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 3.1.3 ենթակետի համաձայն՝ գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի որջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Կանոնագրքի նշված իրավանորմից հետևում է, որ փաստաբանը պարտականություն է կրում վստահորդի հետ կնքել իրավական օգնություն ցույց տալու գրավոր պայմանագիր, եթե իրավաբանական օգնությունը տրամադրվում է վճարովի հիմունքներով: Ընդ որում, փաստաբանը վստահորդի գործը ստանձնելու պահին անմիջապես կարող է գրավոր պայմանագիր չկնքել պայմանով, որ վստահորդի հետ գրավոր պայմանագիրը կկնքվի հանձնարարությունը փաստաբանի կողմից փաստացի ստանձնելուց հետո երկամսյա ժամկետում: Նշված ժամկետն անցնելուց հետո փաստաբանի կողմից վստահորդի հետ փաստաբանական կամ իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը գրավոր ձևով կնքված չլինելու դեպքում կառաջանա փաստաբանի կարգապահական պատասխանատվության հիմք:

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը

Գործի նյութերից հետևում է, որ Դիմողի և Պատասխանողի միջև փաստաբանական ծառայությունների մատուցման իրավահարաբերություններն սկիզբ են առել շուրջ 4 տարի առաջ՝ 2015թ.: Դիմողը Պատասխանողին մեղադրում է նրանում, վերջինս իր հետ երբևէ գրավոր պայմանագիր չի կնքել, իսկ Պատասխանողն իր բացատրությունում հերքում է Դիմողի սույն պնդումը՝ նշելով, որ նման գրավոր պայմանագիր կնքվել է, սակայն որևէ ապացույց, որը կհիմնավորեր իր պնդումը, Պատասխանողը չի ներկայացրել: Նման ապացույց կարող էր լինել, նախևառաջ, հենց այդ գրավոր պայմանագիրը, որը Պատասխանողը Պալատին չի ներկայացրել՝ պատճառաբանելով, որ այն իր մոտ չի գտնվում և հնարավոր է չի պահպանվել: Հետևաբար, Պալատի խորհուրդն արձանագրում

է, որ Պատասխանողը չի ներկայացրել ապացույց, որը կհաստատեր իր կողմից վկայակոչված փաստը, այն է՝ Դիմողի հետ փաստաբանական ծառայությունների գրավոր պայմանագրի կնքումը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պալատի խորուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Դիմողի և Պատասխանողի միջև փաստաբանական ծառայությունների մատուցման գրավոր պայմանագիր չի կնքվել:

Ինչ վերաբերում է վճարման անդորրագրերն իրեն չտրամադրելու վերաբերյալ Դիմողի պնդումներին, ապա Պալատը գտնում է, որ դրանք ենթակա չեն քննարկման սույն կարգապահական վարույթի շրջանակներում, քանի որ դուրս են Պատասխանողի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման վերաբերյալ Որոշմամբ սահմանված առարկայական շրջանակներից:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց ՝

1. Փաստաբան Գայանե Ջաքարյանին (արտոնագիր՝ թիվ 432) ճանաչել մեղավոր Կանոնագրի 3.1.3 ենթակետի խախտման համար:

2. Փաստաբան Գայանե Ջաքարյանի (արտոնագիր՝ թիվ 432) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

«Վ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Հարություն Հարությունյան

27 փետրվարի 2019թ.
թիվ ԿԳ/33-Ա
ք. Երևան